

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒՓՈՒՄԵ ԵՂՇԱՏՅԱՆ «ՎՐԱՍԱՆԻ ՄՈՆԻՏՐԻՆԳԻՆԳ» ԹԻՎ 22 ԸՆՏՐԱՏԵՂԱՍՏԱԸ ՊԱՏՐԱՍ Է ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԿԱՅՆԱԿԱԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ



- Ինչպե՞ս է նախապատրաստվում Ձեր ընտրատարածքը հոկտեմբերի 4-ին կայանալիք ընտրություններին:

Այս հարցով «Վրաստան» թերթը դիմեց Թբիլիսիի Կրծանիսի մունիցիպալիտետի թիվ 22 ընտրատեղամասի հանձնաժողովի անդամ

ված է մոտ 14960 ընտրող:

- Մի քանի խոսք՝ Ձեր մասին:

- Արդեն իններորդ ուսումնական տարին է, ինչ անգլերեն եմ դասավանդում մայրաքաղաքի թիվ 104 հանրային հայալեզու դպրոցում: Ծնունդով Հայաստանի Գյումրի քաղաքից եմ, ուր ստացել եմ բարձրագույն կրթություն՝ ավարտելով Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը: Ընտանիք եմ կազմել Թբիլիսիում եւ մշտական բնակություն հաստատել այստեղ: Սովորել ու տիրապետում եմ վրացերենին, հաջողությամբ հանձնել եմ Վրաստանի քաղաքացիության համար նախատեսված քննությունը եւ ունեմ երկքաղաքացիություն:

Նշեմ, որ չնայած մասնագիտությամբ մանկավարժ եմ, սակայն փորձում եմ ինձ տեսնել այլ բնագավառներում եւս: Այդ պատճառով էլ հանձնել եմ ընտրության ընթացակարգերի հետ կապված քննություն, նշյալ ուղղությամբ մի քանի անգամ մասնակցել թրենինգների եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նշանակվել վերը նշված ընտրատեղամասի հանձնաժողովի անդամ:

ՎԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ


Հռիփսիմե Եղջատյանին:

- Ինչպես մայրաքաղաքի հարյուրավոր ընտրատեղամասեր, այնպես էլ՝ մեր ընտրատարածքը, որը բացվել է Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցում, լրիվությամբ պատրաստ է հաջողությամբ անցկացնելու այս տարվա տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Ընտրատեղամասի տարածքում փակցվել են ընտրողների ցուցակները, հանձնաժողովի անդամները մինչեւ սեպտեմբերի 15-ը հասցրեցին ընտրաքարտերը բաժանել բնակչությանը: Տեղամասում գրանց-

ԳՆԵՐԻ ՇՈՒԿԱ

ՈՍԿՈՒ ԵՎ ԱՐԾԱԹԻ ԳՆԵՐԸ ՀԱՍԵԼ ԵՆ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՇԵՄԻ

Միջազգային շուկայում ոսկու եւ արծաթի գները շարունակում են աճել եւ հասել են ռեկորդային շեմի: Ներկա դրությամբ, մեկ տրոյական ունցիա (31,1 գրամ) ոսկու արծեքը միջազգային շուկայում հասել է 3550, իսկ արծաթինը՝ 41 դոլարի:



Փորձագետների գնահատմամբ, թանկարժեք մետաղների գների աճը գլոբալ գործընթաց է, եւ առաջիկայում այն կշարունակվի արագացող տեմպերով: Դա պայմանավորված է նրանով, որ աշխարհի շատ երկրներ, որպես պետական պահուստներ գերադասում են կուտակել ոսկե ձուլակտորներ, քան ԱՄՆ դոլարը, եւ սկսել են լայն մասշտաբներով գնել այն: Ոսկու պաշարների ավելացմանը զուգընթաց, պետությունները վաճառքի են հանում ԱՄՆ պետական արժեթուղիները, որոնք նախկինում հուսալի պահուստի համբավ ունեին: Հատկանշական է, որ ոսկու շուկայական գնի վերջին թռիչքին նախորդեց Այասկայում ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահների հանդիպումը:

Թանկարժեք մետաղների շուկայում գնաճի դինամիկայի վերլուծությունը ցույց տվեց, որ, նախորդ շաբաթվա համեմատ, ոսկու գինն ավելացել է 3, իսկ արծաթինը՝ 5 տոկոսով: Ինչ վերաբերում է գների փոփոխման տարեկան կտրվածքով վերլուծությանը, ապա թե՛ ոսկու, թե՛ արծաթի գինը գրեթե կրկնապատկվել է եւ գերազանցել 2008 թվականի տնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված 15-ամյա պատմական ցուցանիշը:

Ինչ վերաբերում է ոսկու վրացական շուկայում ստեղծված իրավիճակին, ապա Թբիլիսիում 999,9 ոսկու մեկ գրամի արծեքը կազմում է 203 դոլար, իսկ մաքուր արծաթինը՝ 3,33 դոլար:

ՄՈՆԻՏՐԻՆԳ

ԻՐԱԿԻ ԼԵՔԻՆԱՉԵ. «ՄԵԿ ԼԱՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԱՅՔԸ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ 30 ԼԱՐԻՈՎ»

ԻՆՉ ԲԱՅԱՆԱՅՏԵՑ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՄՈՆԻՏՐԻՆԳԸ

Վրաստանի մրցակցության եւ սպառողների պաշտպանության գործակալության կողմից, ողջ երկրի տարածքով, անցկացվեց դեղագործական շուկայի մոնիտորինգ, որի ընթացքում, բացահայտված խախտումների արդյունքում, տուգանվել է դեղագործական չորս ընկերություն:



Հանրագումարելով մոնիտորինգի արդյունքները՝ Վրաստանի մրցակցության եւ սպառողների պաշտպանության գործակալության նախագահ Իրակլի Լեքվինաձեն հայտարարեց, որ դեղագործական շուկայի մոնիտորինգի արդյունքներով ներկայացվել են 13 հանձնարարականներ:

- Մի շարք հանձնարարականներ Վրաստանի կառավարությունը եւ առողջապահության նախարարությունը արդեն ներդրել են, դրանցից ամենաարդյունավետը ռեֆերենտային գներն էին, որի շնորհիվ դեղորայքի գները զգալիորեն նվազեցին: Արդյունավետ էր նաեւ էլեկտրոնային դեղատոմսերի կիրարկումը, ինչը սպառողներին տվեց դեղորայքի ձեռքբերման հարցում որոշակի տնտեսման հնարավորություն եւս,- հայտարարեց Իրակլի Լեքվինաձեն եւ հավելեց, որ մոնիտորինգի արդյունքներով տուգանվել է դեղագործական չորս ընկերություն:

- Մենք ուռուցքաբանական հիվանդությունների դեղորայքի գների ձեւավորման գործում, համաձայնեցված գործողությունների համար, բավական պատկառելի գումարներով տուգանեցինք դեղագործական չորս ընկերությունների, որոնք մեկ լարիով արտասահմանից ներկրած դեղորայքը վաճառում էին 30 լարիով,- ընդգծեց Վրաստանի մրցակցության եւ սպառողների պաշտպանության գործակալության ղեկավարը՝ հավելելով, որ գների սահմանման գործում, ներկա դրությամբ, վավերացվել է որոշակի առաջընթաց:

- Դեղորայքի հավելավճարը հասցվել էր 180-200 տոկոսի եւ դրանցում այնպիսի ծախսեր էին ներառվել, ինչպիսիք են, օրինակ, գիտական խորհրդատվության կազմակերպումը, թանկարժեք հյուրանոցներում համարների զբաղեցնելը, պլաստիկ վիրահատությունները եւ այլն: Եվ այդ գումարները, մինչեւ ռեֆերենտային գների սահմանումը, ներառվում էին բոլորին քաջածանոթ ու լայն պահանջարկ վայելով դեղորայքի գներում: Հուսով ենք, որ մոնիտորինգի արդյունքներով ներկայացրած հանձնարարականները նշանակալիորեն կազդեն դեղորայքի սպառողական գների վրա,- նշեց Իրակլի Լեքվինաձեն:

ՄԻՄՆԵ ԿԻԼԱՉԵ


«ԹԵԳԵՏԱ ՄՈՏՈՐՍԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԱՐԴԱՏԱՐ ԵՎ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԼԻԱՐԺԵՔ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԼԱՅՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ.

- ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ (ՎՈՒԿԱՆԻՋԱՅԻԱ)
- ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
- ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
- ՇԱՐԺԻՉԻ ՅՈՒՂԻ ՓՈԽՈՒՄ
- ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՏՈՒՓԻ ՅՈՒՂԻ ՓՈԽՈՒՄ

ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ.

- ԿՑՄԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻԱՅԻ ՀԱՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ
- ՇԱՐԺԻՉԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՏՈՒ ՓՈԽՈՒՄ
- ԱՌՋԵՎԻ ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԴԻՍԿԵՐԻ ՀՂԿՈՒՄ
- ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱՍԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
- ՇԱՐԺԻՉԻ ՅՈՒՂԻ ԵՎ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ՎԱՌԵԼԻՔԻ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ՕԴԱՅԻՆ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ԽՑԻԿԻ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՏՈՒՓԻ ՅՈՒՂԻ ԵՎ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ
- ՀՈՎԱՅՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՒԳՈՒՄ
- ԳՈՒՐՇԻՈՎ ՕԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՒԳՈՒՄ
- ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ՇԵՂՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
- ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ



ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՅՆ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՏԵՂ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ԺԱՄԱՆ՝ 08:00-ԻՑ 20:00



Հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրեք անձնական վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը



Անցեք դրոշմմամբ ստուգման ընթացակարգը




Գրանցողը ձեր տվյալները կստուգի էլեկտրոնային մույնականացման սարքով



Անցեք դրոշմման ընթացակարգը



Նույնականացումից հետո, սարքը կտպի կտրոն, որի ստորագրմամբ դուք հաստատում եք ընտրությունների մասնակցությունը, կտրոնը մնում է գրանցողի մոտ



Ձեզ կփոխանցվի (երեք սյունակի բաժանված) քվեաթերթիկը եւ հատուկ շրջանակ-ծրար



Գաղտնի քվեարկության խցիկում, հատուկ մարկերով քվեաթերթիկում ներկեք ձեր ցանկալի միայն մեկ ընտրական սուբյեկտի/թեկնածուի դիմացի առկա շրջանակը



Ձեր ընտրության գաղտնիությունն ապահովելու համար շրջեք քվեաթերթիկը, տեղավորեք շրջանակ-ծրարում



Հատուկ շրջանակ-ծրարի օգտագործմամբ քվեաթերթիկը տեղադրեք ձայների հաշվառման սարքի կափարիչի ստորեւ գտնվող անցքում

ՇՐՋԱՆԱԿ-ԾՐԱՐԸ ԴՐԵՔ ՀԱՏՈՒԿ ՍԵՂԱՆԻՆ ԵՎ ԴՈՒՐՍ ԵԿԵՔ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԻՑ

ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՑՎԱԾ ԵՆ.

Թույլ տեսողությամբ անձանց համար խոշորացույց

Կույրերի համար՝ քվեաթերթիկի լրացման շրջանակային ձեւաչափ

Համրերի համար՝ ժեստերի լեզվով եւ կույրերի համար՝ աուդիոձեւաչափով քվեարկության մասնակցությունը նկարագրող պաստառ

Սայլակից օգտվող անձանց համար՝ համապատասխանեցված մատչելի ընտրական տեղամասում քվեարկության խցիկ

Եթե ինքնուրույն չեք կարող լրացնել ընտրական քվեաթերթիկը, իրավունք ունեք օգնության համար գաղտնի քվեարկության խցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի եւ զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների եւ դիտորդների:

Եթե քվեաթերթիկը փչանում է, կարող եք դիմել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին եւ միայն մեկ անգամ փոխել քվեաթերթիկը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՉՎՐՏՆԻ Է



ԽՅԻԿՈՒՄ ՀՈՏՈՒՄ/ՏԵՍԱՆԿԱՐԱՆՆՈՒՄՆ ԵՐԳԵՆՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍԱՆԻ», ԱՐՄԵՆԳՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՅ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ 34-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԶԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Երկու օր անց՝ սեպտեմբերի 23-ին, երկրի Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ, ինքնիշխան հանրապետություն: Նորանկախ Հայաստանի հռչակմամբ սկիզբ դրվեց Հայաստանի երրորդ Հանրապետության պատմությանը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Արմավիր քաղաքում ներկա է գտնվել Հայաստանի անկախության 34-րդ տարեդարձին նվիրված փառատոնին:

Հայաստանի անկախության օրվա առթիվ շնորհավորանքներ են հղել Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, նախագահ Միխեիլ Դավելաշվիլին, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, Զինաստանի պետական խորհրդի նախագահ Լի Ցյանը, Ղազախստանի նախագահ Կասիմ-ժոմարտ Տոկաեվը, Եգիպտոսի նախագահ Աբդ Ալ-Ֆաթհի Ալ-Սիսին, Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը, Թուրքմենստանի նախագահ Սերդար Բերդյուխովանը, Ուրուգվայի նախագահ Ժամանուել Օրսին, Բուլղարիայի վարչապետ Ռոսեն Շելյակովը, Մոլդովայի վարչապետ Դորին Ռեչանը, պաշտոնատար այլ անձինք:

ՄԱՐԹԱ ԿՈՍ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԲԵՔ ԱՅՊՔԱՆ ՄՈՏ ԶԻ ԵՂԵԼ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆԸ, ԻՆՉՊԵՍ ԶԻՄԱ»



Սեպտեմբերի 19-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Երևանում գտնվող Եվրոպական միության ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսի գլխավորած պատվիրակության հետ:

Հանդիպմանը գրուցակիցները քննարկեցին Հայաստան-ԵՄ գործընկերության առաջնահերթությունները, առաջիկա ամեկիքներն ու փոխգործակցության խորացման հնարավորությունները: Անդրադարձան ԵՄ աջակցությամբ Հայաստանում իրականացվող ծրագրերին, տնտեսական գործընկերության խթանման ուղիներին, ինչպես նաև վիզաների ազատականացման շուրջ ընթացող երկխոսությունները:

Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտնեց ԵՄ հետևողական աջակցության համար, ընդգծելով, որ այն կարևոր դեր ունի Հայաստանի կառավարության հավակնոտ բարեփոխումների օրակարգի իրականացման գործում: Նիկոլ Փաշինյանը կարեւորեց ԵՄ օժանդակությունը Հայաստանի տնտեսական դիվերսիֆիկացմանը, տրանսպորտային ու ենթակառուցվածքային զարգացմանը, փոքր եւ միջին բիզնեսի կարողությունների ընդլայնմանը:

Իր հերթին, Մարթա Կոսը վերահաստատեց ԵՄ ամուր աջակցությունը Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումների արդյունավետ իրագործմանը: Նա նշեց, որ ԵՄ-ը բարձր է գնահատում տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացը, որը կնպաստի համագործակցության հետագա զարգացմանն ու խորացմանը: Մարթա Կոսի հավաստմամբ, Հայաստանը երբեք այդքան մոտ չի եղել Եվրամիությանը, ինչպես հիմա:

Կողմերը պատրաստակամություն հայտնեցին շարունակելու սերտ համագործակցությունը՝ ուղղված Հայաստանի ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը, տնտեսական աճի խթանմանը եւ տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանմանը:

«ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՐՈՒՍ Է...»

Սեպտեմբերի 26-ին, «Համաշխարհային ատոմային շաբաթ» խորագրով համաժողովին, մասնակցության համար աշխատանքային այցով Մոսկվայում գտնվող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կրեմլում հանդիպում ունեցավ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:



Հանդիպմանը ՌԴ նախագահը Հայաստանի վարչապետին շնորհակալություն հայտնեց միջազգային համաժողովի մասնակցության հրավերն ընդունելու համար եւ ընդգծեց, որ բոլոր, այդ թվում ատոմային ենթակառուցվածքային ոլորտում հարաբերությունները դիմադրող զարգացումն են: ՌԴ նախագահը որպես օրինակ նշեց այն փաստը, որ 2024 թվականին երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալը հասցվել է 11,7 միլիարդ դոլարի:

Իր հերթին, Հայաստանի վարչապետը շնորհակալություն հայտնեց համաժողովի մասնակցության հրավերի համար եւ նշեց, որ Ռուսաստանի հետ համագործակցությամբ երկրում ատոմային էներգետիկայի զարգացումը արտակարգ նշանակալի է, քանի որ Հայկական ատոմակայանը, ներկա դրությամբ, ապահովում է երկրի էներգետիկայի մեկ երրորդը:

Նիկոլ Փաշինյանը հավելեց նաև, որ երկկողմ հարաբերությունները դիմադրող զարգացում են, թեպետ հայ-ռուսական հարաբերությունների օրակարգը շատ հարուստ է, սակայն առկա են նաև քննարկման ենթակա շատ հարցեր:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ

Սեպտեմբերի 20-ին, Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, անցկացվեց Հայաստանում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (ՔՊԿ) յոթերորդ համաժողովը:

Րի ընդունումը, ՔՊԿ Յուրայի ղեկավարի ընդունումը, ՔՊԿ Վարչության եւ Վերահսկող հանձնաժողովի անդամների թիվը եւ ընտրության կարգը, Վարչության նախագահի ընտրության կարգը սահմանելու մասին որոշման ընդունումը, ՔՊԿ Վերահսկող հանձնաժողովի անդամների ընտրությունը, ՔՊԿ Վարչության անդամների եւ Վարչության նախագահի ընտրությունը: Համաժողովին մասնակցելու իրավունք ունեցող 974 անձից, քվեարկությանը մասնակցել է 917-ը:

Համաժողովի օրակարգում ընդգրկված էին հաշվիչ հանձնաժողովի կազմի հաստատումը, բողոքարկման հանձնաժողովի կազմի հաստատումը, ՔՊԿ վարչության հաշվետվության ներկայացումն ու հաստատումը, ՔՊԿ նոր խմբագրությանը կանոնադրության հաստատումը, ՔՊԿ նոր Ծրագրի ընդունումը:

Նիկոլ Փաշինյանը հավելեց նաև, որ երկկողմ հարաբերությունները դիմադրող զարգացում են, թեպետ հայ-ռուսական հարաբերությունների օրակարգը շատ հարուստ է, սակայն առկա են նաև քննարկման ենթակա շատ հարցեր:

Համաժողովին մասնակցելու իրավունք ունեցող 974 անձից, քվեարկությանը մասնակցել է 917-ը: Համաժողովին մասնակցելու իրավունք ունեցող 974 անձից, քվեարկությանը մասնակցել է 917-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏՔՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Սեպտեմբերի 25-ին Հայաստանի կառավարությունը հաստատեց «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը:

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է 7,1 ՏՈՎՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշը, 2025 թվականի առաջին 8 ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, աճել է 7,1 տոկոսով: Օգոստոսին այն 5,4 տոկոսով բարձր է եղել նախորդ ամսվա ցուցանիշից, իսկ 2024 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել է 7,5 տոկոսով: Արդյունաբերական արտադրանքի ծավալն օգոստոսին մեկ ամսվա կտրվածքով աճել է 10,7 տոկոսով՝ գնահատվելով 268 մլրդ 813,1 մլն դրամ: Իսկ նախորդ տարվա օգոստոսի համեմատ՝ աճել է 5,8 տոկոսով:

ՎԱՐՅՈՒ ԱՆԵՍԱՌՆԵՐԻ ԹԻՎԵ ԱՎԵԼԱՑԵԼ Է Հայաստանում վարչու աշխատողների թիվը 2025 թվականի հունվար-հունիսին աճել է 5 տոկոսով: Այս մասին 2025թ. պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքի ներկայացմանը ասաց Հայաստանի ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը: - Հունվար-հունիսին վարչու աշխատողների թիվն աճել է 5 տոկոսով՝ հիմնականում պայմանավորված առեւտրի, շինարարության, ինչպես նաև պետական կառավարման եւ պաշտպանության ոլորտներում աշխատողների թվաքանակի աճով, ասաց Հովհաննիսյանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՍԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄՐՏԱՅՆՈՒՄՆ ԱՃԵԼ Է Հայաստանի արտահանումն այս տարվա առաջին կիսամյակում նվազել է 52,8 տոկոսով, սակայն հայկական ծագման ապրանքների արտահանումն աճել է 10,3 տոկոսով: Հայաստանի ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի խոսքով, հունվար-հունիսին ապրանքների ներմուծումը նվազել է 38,6 տոկոսով, որը նույնպես պայմանավորված է վերաարտահանման կտրուկ նվազմամբ, վերաարտահանման ազդեցությունը հանած՝ ներմուծման աճը կազմել է շուրջ 7 տոկոս:

ՊԱՍԱՐԱՆԸ ՄԻՋԵՅԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՂՈՍ ԱՍՊՊԱՅՆՆԵՐԻ ՄԵՂԱՎՈՐ ՀԱՆԱՅԵՅ Երևանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը դատավոր Արմինե Մելիքսեթյանի նախագահությամբ, հրապարակեց վերոհիշյալ: Դատարանը մեղավոր ճանաչեց Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին ներկայացված մեղադրանքում եւ նրա նկատմամբ ընդդրված խափանման միջոցը՝ կալանքը, մնաց անփոփոխ: Լրացույցի դատախոսները նշանակվել են սեպտեմբերի 29-ին: Միքայել արքեպիսկոպոսի իրեն մեղավոր չի ճանաչում, գործընթացը քաղաքական հետապնդում է համարում: Փաստաբան Արա Զոհրաբյանն ասաց, որ դատավորի գործողությունները կանխարգելիչ էին: - Մենք բոլորս հրապարակայնորեն տեսանք թե դատավորն ինչ կոպիտ խախտումներ է թույլ տալիս, նշեց նա:

Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը նշեց, որ բյուջեն համահունչ է կառավարության ծրագրի առաջնահերթություններին եւ ներառում է սոցիալական, կրթական, առողջապահական, տնտեսական եւ ենթակառուցվածքային կարևոր նախաձեռնություններ:

4,9 միլիարդ դրամ, ուսուցիչների եւ մանկավարժական աշխատողների աշխատավարձերը կբարձրանան ատեստավորման արդյունքում, կշարունակվի դպրոցների եւ մանկապարտեզների կառուցումը, հիմնանորոգումը եւ անհրաժեշտ սարքավորումներով հագեցումը: Ծանապարհային ենթակառուցվածքների ուղղությամբ միջպետական, հանրապետական եւ մարզային նշանակության ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների նորոգման եւ պահպանման համար նախատեսվում է 66,2 միլիարդ դրամ:

Հայաստանի պետական բյուջեի ծախսերը 2026-ին նախատեսվում են 3 տրիլիոն 628 միլիարդ դրամ: Նախարարի խոսքով, այդ ծախսերից ընթացիկ բաժինը կկազմի 2 տրիլիոն 924 միլիարդ դրամ, իսկ կապիտալ ծախսերը՝ 704 միլիարդ դրամ, որը, համախառն ներքին արդյունքի համեմատ, կկազմի 5,9 տոկոս: Պետական բյուջեի պակասուրդը 2026 թվականին նախատեսվում է 537 միլիարդ դրամ՝ ՀՆԱ-ի 4,5 տոկոսը, մինչդեռ 2025-ին այն կազմում էր 5,5 տոկոս, ընդ որում, միջնաժամկետում այն կնվազի մինչեւ պարտքի բեռը կայուն պահող 2,8 տոկոս մակարդակի: Արդյունքում, կառավարության պարտք-ՀՆԱ ցուցանիշը 2026 թվականի ավարտին կանխատեսվում է 53,5 տոկոս:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՍՈՎՈՐՈՂ - ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱԼԱՏԸ

Սեպտեմբերի 22-ին հանդիսավոր կերպով վերաբացվեց 2020 թվականից ի վեր, պալատի նախկին տնօրեն (2016-2024թթ.), ներկայիս մշակույթի նախարար Թինաթին Ռուսաձեի նախաձեռնությամբ, Թբիլիսիի քաղաքապետարանի և Թբիլիսիի զարգացման հիմնադրամի աջակցությամբ, ժամանակակից չափանիշներին համապատասխան վերանորոգված, Թբիլիսիի կենտրոնում, Ռուսթավելու պողոտայում տեղակայված Սովորող - երիտասարդության ազգային պալատը:



Սովորող - երիտասարդության պալատի բացման արարողության հյուրերին դիմեցին վարչապետ Իրակլի Կոբախիձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, մշակույթի նախարար Թինաթին Ռուսաձեն և պալատի ղեկավար Նինա Ղիփիանին: Գրեթե հինգ տարվա ընթացքում անցկացված վերակառուցման գործընթացը ղեկավարել է ճարտարապետ Մերաբ Բոճոիձեն, և շենքը հնարավորինս պահպանել է իր պատմական տեսքը: Հիշեցնենք, որ շենքը կառուցվել է 1802 թվականին, եղել է ցարական Ռուսաստանի

փոխարքայության պալատը, կարճ ժամանակահատվածում Անդրկովկասյան Սեյմի գումարման վայրը, ուր 1918 թվականի մայիսին ընդունվեցին Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի անկախության հռչակագրերը: 1941 թվականին շենքը ծառայել է որպես Պիոներների և աշակերտների համրապետական պալատ: Հետագայում այն բազմիցս լուծարվել/վերակազմակերպվել է և 2015 թվականի մայիսի 6-ից, Թբիլիսիի կառավարության որոշմամբ, հիմնադրվել է որպես Սովորող - երիտասարդության ազգային պալատ:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՈՍԿԵ ԳՆՂԱԿ» ՄՐՑԱՆԱԿԸ՝ ՈՒՍԱՆ ԴԵՄԲԵԼԵԻՆ ՀԱՎԱԿՆՈՐԳՆԵՐԻ ՅՈՒՅԱԿՈՒՄ ԽՎԻՉԱ ԿՎԱՐԱՅԻՆԵԼԻՆ 12-ՐԳՆ ԷՐ

Սեպտեմբերի 22-ին Փարիզի «Շատլ» թատրոնում անցկացվեց «France Football» ամսագրի կողմից սահմանված 2024-2025 տարվա խաղաշրջանի աշխարհի լավագույն ֆուտբոլիստի բացահայտման մրցանակաբաշխությունը: Մարզական լրագրողների քվեարկությանը ներկայացրած ցուցակում նշված էին 30 լավագույն ֆուտբոլիստները: Ցուցակում 12-րդ համարի տակ ներկայացված էր Վրաստանի հավաքականի անդամ, ֆրանսիական «ՊՍՄ» թիմի ֆուտբոլիստ Սվիզա Կվարացխելիան:




Քվեարկության արդյունքում՝ «Ոսկե գնդակ» մրցանակը շնորհվեց իսվիչա Կվարացխելիայի թիմակից Ուսման Դեմբելեին:

ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀԻՇՏԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԵՐԻՑԻ

ՏԵՐ ԵՂԻՉԵ ԱՎԱԳ ՔԱԽԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

86 տարեկանում Թբիլիսիում կյանքից հեռացավ Վիրահայոց թեմի բազմավաստակ հոգևոր սպասավոր Արծանապատիվ Տեր Եղիշե Ավագ Քախանա Հարությունյանը (ավագանի անունը՝ Ռազմիկ): Նա ծնվել է 1939 թվականի սեպտեմբերի 1-ին Գյումրիում, ուր ստացել է միջնակարգ կրթությունը: Սովորել է ավարտել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգյան Հոգևոր ճեմարանը: 1968 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1969 թվականին օծվել է քահանա և անցել ծառայության Ախալքալաքի «Սուրբ Խաչ» եկեղեցում:



1972 թվականին տեղափոխվել է Թբիլիսիի Սուրբ Էջմիածին, ապա 1976-ին՝ առաջնորդանիստ Սուրբ Գեորգ եկեղեցի: Տարբեր տարիներին նշանակվել է Մառնեուլիի, Թեթրի-Ղարոյի, Բուլնիսիի, Դմանիսիի, ինչպես նաև Սամցխե-Ջավախեթիի ու Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդության Ախալքալաքի «Սուրբ Խաչ» եկեղեցու և Ախալցխիսի մունիցիպալիտետի հայկական գյուղերի հոգևոր հովիվ:

2019 թվականից կրկին ծառայության է անցել Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցում:

55 տարիների հոգևոր ծառայության ընթացքում, որտեղ էլ հոգևորականի իր առաքելությունն է կատարել Տեր Եղիշեն, այդպես էին նրան խոնարհաբար դիմում հավատացյալները, իր հոգևոր ու մարդկային բարձր հատկանիշների շնորհիվ վայելել է հավատացյալների մեծ սերն ու պատկառանքը: Նրա՝ երկարամյա հոգևորականի նվիրյալ կերպարը, օրինակ է համոզեցրել, որ որդին ու թոռը՝ Տեր Հուսիկ Քախանա և Տեր Հովսեփ Քախանա Հարությունյանները ևս ընտրեն հոգևորականի ճանապարհը:

Լուսահոգի Տեր Եղիշե Ավագ Քախանա Հարությունյանի կորուստը մեծ ցավ պատճառեց հազարավոր հավատացյալների, որոնց հիշողության մեջ երկար կապրի նրա լուսավոր հիշատակը:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՍ

Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը, «Վրաստան» թերթի խմբագրությունը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը խորապես ցավակցում են Թեմի քահանաներ Տեր Հուսիկ և Տեր Հովսեփ Հարությունյաններին, սիրելի հոր ու պապի՝ Սուրբ Գեորգ եկեղեցու Արծանապատիվ Տեր Եղիշե Ավագ Քախանա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ մահվան կապակցությամբ և կիսում հանգուցյալի ընտանիքի անդամների, հարազատների ու բարեկամների վիշտը: Հուղարկավորությունը, շաբաթ, սեպտեմբերի 27-ին, ժամը՝ 14:00-ին, Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցուց:

Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը, «Վրաստան» թերթի խմբագրությունը ցավակցում են թատրոնի տնօրեն Արմեն Բայանդուրյանին և դերասան Նարեկ Բայանդուրյանին, քրոջ ամուսնու և հորաքրոջ ամուսնու՝ Ալբերտ Աղասիի ԳՅՈՒԼՋԱՅԱՆԻ մահվան կապակցությամբ և վշտակցում հանգուցյալի ընտանիքի անդամներին, հարազատներին ու բարեկամներին:

Table with 10 columns and 10 rows containing numbers 1 through 60 in a grid pattern.

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 6.Արծանապատիվությունից զուրկ, ստոր: 8.Չափ, լիմիտ: 10.Վարդազգիների ընտանիքի պտուղ: 11.Առավոտ շուտ, կանուխ: 13.Մեծ Հայքի Արշակունի թագավոր Խոսրով ...: 14.Նահանգ ԱՄՆ-ում: 16.Աման, սկավառակ: 17.Կաշվից, մորթուց հագուստեղեն կարող արհեստավոր: 18.Ադամի առաջին կինը: 20.Փորձանք (բրբ.): 21.Ցուցական դերանուն: 22.Գրկաչափ, շալակ: 26.Ամենամեծ աշխարհամասը, որը Եվրոպայի հետ կազմում է Եվրասիա մայրցամաքը: 28.Վճարով ուղևորներ փոխադրող ավտոմեքենա: 31.Թիֆլիսում ստեղծագործող հայ գրող ...-Դոս: 32.Փայտե աման, որ իբրեւ չափ էր ծառայում հացահատիկի համար: 34.Երկու տասնյակ: 35.Հոգևորական: 36.Պեպոյի բարեկամներից: 38.Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Իսրայել ...: 41.Հավերժ: 43.Հայկական պանթեոնի աստված: 45.Լատինաամերիկական պար: 48.Ըստ Աստվածաշնչի, ջրհեղեղից հետո «նոր մարդկության» նախադրը: 49.Հրաբուխից դուրս ժայթքող բոցավառ նյութ, մագմա: 52.Փոքրիկ կուճ: 53.Սերտելու համար տրված նյութ: 54.Հարյուր տարի: 55.Օպերային մեներգ: 56.Նվեր, պարգև: 57.Վրացի երգչուհի ... Ջամբախիձե: 58.Գորտի ձայն: 59.Խոշոր, հսկա: 60.Մարզական կղեկավար:

ՈՐԴՆԱԾՅԱՑ. 1.Քաղաք Փոքր Հայքում: 2.Փոքր գետակ: 3.Սզարան, առագաստ: 4.Փոքրիկ ապակյա անոթ՝ շշիկ: 5.Մատնիչ, անհավատարիմ: 7.ԽՍՀՄ առաջնորդ: 9.Կլիմա: 12.Զգացմունք: 15.Երգչուհի՝ ...Դուլինա: 19.Ընտիր, բարձրակարգ: 23.Պարատեսակ: 24.Հայոց թագավոր 338-350թթ: 25.Ալկոհոլային խմիչք: 27.Դրամ: 29.Անտառակաքավ, դահուճ: 30.Զրկող թռչուն: 32.Արևի գլխարկ: 33.Խոշոր աման, լազան: 37.Բրիտանական ռոք խումբ: 39.Հայտնի քոլեջ-նախակրթարան Երեւանում: 40.Ըստ ավանդության Սուրբ Հռիփսիմեի քրիստոնյա կույսերի միաբանության մայրապետը: 41.Ավտարալո-ամերիկյան դերասան, ռեժիսոր ... Գիբսոն: 42.Ճապոնական էլեկտրատեխնիկայի ֆիրմա: 44.Սեղսավոր ու այլասերված կործանված քաղաք (ըստ Աստվածաշնչի): 46.Հողի մակերեսի չափման միավոր: 47.Կրակի ջերմություն, բոց: 50.Ավանդական սովորույթ: 51.Հանրահայտ կոմպոզիտոր, համաշխարհային դասական ... Խաչատրյան:

Գլխավոր խմբագիր, տնօրեն՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՐՈՍՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՔՅՅ60 ՁՈՆԱՅՅԻՄՈ: ՄՁՈԼՈՆՈ 0105, Ճ.ՅՈՒՐԵՅԻՄՈՆ ՄՅՅԱ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ԹՊԸ, Հեռ. 2990-739, 2990-774
www.vrstan.ge E-mail: vrstan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» իրատարակչություն

«ՅՐԱՆԹՅՈՒՆ»
ՄՁՈԼՈՆՈ, ՆԱՅՅՐՈՒՄՅՈՒՄ
«ՅՐԱՏԱՆ»
ТБИЛИСИ, ГРУЗИЯ
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445
Պարբերականում օգտագործվել են վրացական, հայաստանյան, օտարերկրյա մամուլի, ինչպես նաև տեղեկատվական գործակալությունների և համացանցային ծախսերի նյութեր: Խմբագրության դիրքորոշումը կարող է չհամընկնել հեղինակների կարծիքի հետ: